ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 24 » հոկտեմբերի 2019 թվականի N 22

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ աշխատակազմի առաջատար մասնագետ Ա. Գասպարյան,արտահայտվեցին ավագանու անդամներ՝ Ա.Ավետիսյանը, Ռ. Ռուբենյանը Հ. Ասատրյանը) :

Նշեցին , որ 2019թ-ի գյուղատնտեսական աշխատանքները համայնքում ընթացել են կազմակերպված, համայնքապետարանը աջակցել է համայնքի հողօգտագործողներին ազոտական պարարտանյութի մատչելի, շուկայականից ցածր գնով ձեռք բերմանը, գյուղատնտեսական աշխատանքների ժամանակին և որակով կատարմանը:
Համայնքին անհրաժեշտ է վարող տեխնիկա և հացահատիկի շարքացան, պակասում է բերքատու հացահատիկի և կարտոֆիլի սերմեր:Վերանորոգման կարիք ունեն համայնքի ոռոգման համակարգերը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետի և 43,49-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին

որոշում է.

Աջակցել գյուղատնտեսության ոլորտում պետական միջոցներով և այլն աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի կազմակերպմանն ու իրականացմանը: Գյուղատնտեսական աշխատանքները ժամանակին և որակով կատարելու համար աջակցել համայնքի հողօգտագործողներին տեխնիկայով և սերմացուների ձեռք բերելուն, կազմակերպել համայնքի ոռոգման ցանցերի շահագործումը, կատարել դրանց պահպանումն ու վերանորոգումը:

Որոշումն ընդունվել է.

Կողմ(4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՍԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԹԱՆԴԻԼ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԳԻԿ

ՌՈՒԲԵՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 24 » հոկտեմբերի 2019 թվականի N 24

ՀԱՄԱՅՆՔԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ, 7-ՐԴ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ ԵՎ 9-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

որոշում է.

Համաձայնություն տալ համայնքի ղեկավար Տ. Քոչարյանի առաջարկությանը և համայնքի բյուջեի 4251 - շենքերի, շինությունների պահպանում և շահագործում հոդվածից կատարել 630 000 (վեց հարյուր երեսուն) հազար ՀՀ դրամի ծախսեր:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՎԹԱՆԴԻԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԱԳԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
« 24 » հոկտեմբերի 2019 թվականի N 23

ՀԱՄԱՅՆՔԻ 2019 թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

որոշում է.

Հիմք ընդունելով համայնքի ղեկավար Տ. Քոչարյանի առաջարկությունը, կատարել համայնքի 2019 թ. տարեկան բյուջեի փոփոխություն՝

Համայնքի բյուջեի 4235 – աուդիտորական ծառայություններ հոդվածից տալ 4212 - էներգետիկ ծառայություններ հոդվածին՝ 360 000/երեք հարյուր վաթսուն/ հազար ՀՀ դրամ, էլեկտրաէներգիայի արժեքի վճարման համար,

4251 – շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում հոդվածից տալ 4239 – ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածին, 1 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ, մանկապարտեզի ծախսերի ֆինանսավորման համար,

5113-շենքերի, շինությունների կապիտալ վերանորոգում (լուսավորության) ծախսեր հոդվածից տալ 5112-շենքերի և շինությունների կառուցում (լուսավորության) ծախսեր հոդվածին, 1 488.9 /մեկ միլիոն չորս հարյուր ութսունութ հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ , համայնքի փողոցների լուսավորության ցանցի կառուցման համար:

Որոշումն ընդունվել է

Կողմ (4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՍԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԹԱՆԴԻԼ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԳԻԿ

ՌՈՒԲԵՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ.ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք. հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 24 » հոկտեմբերի 2019 թվականի N 21

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2018Թ. 9 ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավար Տ. Քոչարյանը համայնքի ավագանուն ներկայացրեց համայնքի բյուջեի 2019 թ. 9 ամսվա կատարման մասին հաղորդումը. 01-01-2019 թ-ից մինչև 30.09.2019 թ, հազար դրամ.

Եկամտային մաս.

Հ/Հ	Եկամտատեսակ	Նախատեսված տարեկան	Նախատեսված 9 ամսվա	Փաստացի	Կատարման %-ը
1.	Հողի հարկ	3695.6	2771.7	1329.7	48
2.	Հողի և գույքի վարձավճար	1402.1	1051.6	490.5	47
3.	Գույքահարկ ավտո.	4200.0	3150.0	2371.6	75
4.	-//- շինություններից	120.0	90.0	79.2	88
5.	Տեղական տուրքեր	150.0	112.5	161.0	143
6.	Ծնող միջոցներ և աղբ.	1800.0	1350.0	1410.0	104
7.	Աղբահանություն	900.0	675.0	91.2	13.5
	Ընդամենը սեփական եկամուտներ	12267.7	9200.1	5928.2	64.4
8.	Դոտացիա	53191.2	39893.4	39893.4	100
	Ընդամենը	65458.9	49093.5	45821.6	93

Արտահայտվեցին համայնքի ավագանու անդամներ՝ Ա.Ավետիսյանը, Ռ. Ռուբենյանը, Գ.Մանուկյանը:

Նրանք ներկայացրեցին առաջարկություններ համայնքի 2019թ. տարեկան բյուջեն ամբողջությամբ և սահմանված եռամսյակային համամասնություններով ըստ հարկատեսակների և ծախսերի հոդվածների կատարելու համար:

Որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի,1-ին ենթակետի, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

որոշում է.

1.Հաստատել համայնքի ղեկավար Տ. Քոչարյանի կողմից ներկայացրած համայնքի 2019թ. տարեկան բյուջեի 9 ամսվա կատարման մասին հաղորդումը:

2.Հանձնարարել գյուղապետարանի աշխատակազմին՝ ամենօրյա, հետևողական աշխատանքներ տանել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրումը սահմանված տարեկան չափով, ամբողջությամբ և ըստ առանձին հարկատեսակների կատարելու ուղղությամբ:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (4)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)

ԱՎԹԱՆԴԻԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԱԳԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ